

3061

23418

24002

8.9

F-23

1286

XVI, 7.

393.9

7-23

27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

ԵՐ ԲԱՆԿԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

Ս. ՄԱՐԿԱՆԻԱՆ

ՀՅԻ-ՀԻ-2002

010

3061

398.9

F-23

✓



ԱՌԱԿԱԳԻՐԻՔ,

ԻՆՔՆԱԳԻՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԱԾՈՅ ԱՌԱԿՆԵՐ

ԵՒ ԵՐԳԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵՋՈՒՈՎ,

ԳՐՈՒԱԾ

(1001
1245)

ՄԻ. ԲԱՋԱԹԵԱՆՑ:

(Երրորդական)



1886.

ՇՈՒՇԻ

30699-41

Дозволено цензурою 2 марта 1886 г. Г. Тифлисъ

13830-58

9

Скоропечатня книгопродавца М. Мугдусіакопова, въ Шушѣ

Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.,

Մանկավարժներէ լաբէհաճ անօրէնութեան ևս
յանձնում այս փոքրիկ առարկայից՝ պատշաճապէս
գործադրելու երբեք զրաւարժութեան նախնական դա-
սաղիք նորուս պատանեակներէ համար, որ սովորա-
կան ժողովրդական լեզուով և ծանօթ դաղափարնե-
րով անաշխատ կարող էին ըմբռնել ընթերցուածքի
ըմբռնողութիւնը և չէին կրկնապատկել երանց
ճգանքը սկզբնական դարձնելով այլ ժամանակին, և
այս կերպով դիւրաւ կը հարկուէր նոցա ճանապարհը
դէպի մեր այժմեան գրականական լեզուն:

Օրորոցի երգ:

(Կրճատած)

Հայրիկ ունիս քեղղորական,
Լն սուրբ խաչը նրան օգնական,
Հեսիք կուգայ ծիծաղերես,
Ընք կածէ քեղ ական ական,
Քնիր ո՛րդի, Ըստուած սիրես,
Թող կաց կարեմ հօրըդ կապան:
Լայ լայ հոգի, լայ լայ որդի,
Քուն իլ փոքր ինչ, յետոյ զարգնի:
Երկու ծիծըս դարտակել ես,
Ինչես ուզում, էլ ինչ տամ քեղ,
Գատ քո ձեռքիդ ա՛ վատշուէր,
Ըստուծոյ մօտ դատ գընամ ես,
Պա՛ երբ պիտի դու քուն լինես,
Խորովուեցի քո ձեռքիդ ես:
Լայ լայ, հոգի լայ լայ որդի,
Քուն իլ փոքր ինչ, յետոյ զարգնի:
Լողացրել եմ տեղըդ կապել,
Գլուխըդ կուրծքըդ լաւ վայր ծածկել
Փոչ փոչ փափուկ օրորոցըդ,
Փունջ շաղընական վերայ կանել,
Քնիր ո՛րդի Թոյլ սուր ինձ էլ
Ձեռքիս կիսատ կարը կարել,
Լայ լայ հոգի, լայ լայ որդի,
Քուն իլ փոքր ինչ, յետոյ զարգնի:

Երկու խոփ.

Բանի եւ պարզերես կաց,
Անգործ եւ, սեւերես կաց:

Երկու խոփ, երկուսն էլ մէկ վար-
պետի շէնք ընկած էին սրահին վերայ
դէմնւղէմ, մէկը ծիծաղերես վառլըռում
էր, միւսը սեւ սուգ մտած ժանդոտուած էր:
Մուշէղը գնաց սիրուն թաթիկները քըս-
քսեց էն փայլուն խոփին ասելով—

— Հայր, սա ի՞նչու էսպէս պայծառ
ճրագի պէս լոյս է տալիս, էն որ միւսը
այլակերպ, սեւացած ժանդոտած է, մի՞թէ
երկուսն էլ երկաթաշէնք չեն:

— Այո, ասեց որդի, երկուսն էլ
երկաթից են, երկուսն էլ մէկ վարպետի
շէնք, բայց զանազանութիւնը նորանումն
է որ, մէկը միշտ քրքրուել, գործում սրուել
և փայլունութիւն է ստացել՝ բայց միւսը
պարսպ վայր ընկած անգործ է մնացել
և այդ մասին էլ սեւացած է: Ուրեմն դու
էլ խլատ առ ո՞րդի, գործունէութիւնը
միշտ մարդիս պարզերես կը պահէ, բայց
անգործութիւնը տխուր ու սեւերես կանէ
նորան:

Գայլը յուսախաբ.

Ահն բանի մի՛ր հաւատաւհեշտահաւատը շատ
տեղ կըխաբուի ու խաղատեղ կըդառնայ:

Ղինջ ղինջ մանուկ գողգողում,
Օրճմայրը որ սաստիկ նեղուեց,
Ե՛րբ զա՛յլ, ա՛ զայլ կանչեց ասեց—
Եկ մանուկիս տամ քեզ տար:

Մօտերքովը գայլն անցընում,
! քսեց խօսքին, հաւատաց,
Մինչ իրիկուն աչքը չըռած,
Օրճմօր ձեռքին, մաթալ մնաց:

Բայց իրիկուսն մի քաղցրը նինջ,
Որ վայր կոխեց չար մանուկին,
Լնտեղ դայլը յուսահատուած,
Թ՛ւքեց իրա յիմար խելքին,
Ու ձեռք քաշած թողեց դընաց,
Եմբողջ օրը անորս փնացած:

Ծերոց պատիւ:

Ջանք արա որդեղդ բարի օրինակ
տուր, թէ չէ, կրկնշմանես յետոյ:

Խիկարին հայրը ծերացել էր. տան
միջի ծերը շատ յարգելի ու պատուական
է, բայց էնքան սա ալեօրել ոտնու ձեռ-
քից ընկել էր որ, ամն վերայ ծանրու-
թիւն էր դառել: Պատահեց մի անգամ
գաւաթով ջուր խմելիս դողդողաց ալեօրը
ու գաւաթը վայր քցելով փշրեց, սորա
վերայ խիկարի կինը կայծախարուած մաղ-
դին երեսն 'ի վեր թոյնթորաց ասելով--
այրուի էգպէս ծերը, այսուհետեւ նորա
հայն ու ջուրը փայտի ամանով եմ տալու--:

Ինչպէս ասեց, էնպէս էլ արաւ. և
խիկարն էլ չի ընդդիմացաւ կնոջը:

Քաշեց մին քանի ժամանակ, խիկա-
րին ճահել տղան զուարթ, խաղաւեր և
հօրն ու մօրը սիրելի, երբ որ տեսաւ իւր
պապին առաջքին փայտի աման զրած,
կարծիք տարաւ թէ՛ երեւի ծերերին հա-

ցըն ու ջուրը պիտի փայտի ամանով տալ,
և էս կարծիքով նստած նա մէկ օր խա-
ղում ու տաշ էր անում:

Յանկարծ հայրն ու մայրը հարցը-
րին նորան—ինչ ես շինում, որդի:

—Փայտի գաւաթ եմ շինում, պա-
տասխանեց, որ երբոր դուք էլ ծերանաք,
նորանով կերակուր տամ ձեզ:

Իս խօսքը թուրի պէս ներդործեց
խիկարին և կնոջը և այնուհետեւ սկսեցին
հայր ու մայր իրանց սխալը ուղղել և
իրանց ալեօրին պատիւը ճանաչել:

Որձակ և մարդարիտ,

Ի՞նչ բան որ յիմարին անդուրեւան է,
նա ըստըրովին արժէք չունի իւր համար:

Սոված որձակ քըթթ անում աղբահարին
Մի թանգաղին լաւ մարդարիտ դառաւ միջին,
Եւ կտակօտեց, մըռուոց տալով—

—Սա ի՞նչ յիմար, ի՞նչ դարտակ բան,

Հատ յիմար է աղբը մարդկան,
Որ սրան էնպէս մեծ գին են տամ:
Իմ հաւատումս սրանից էլ շատ
Թանկ կաթենար մի գարու հատ,
Թէ կուգես նա տեսք չունենայ,
Բայց սովածին սընունդ կուտայ:

Մկների խորհուրդ,

Քաջութիւն չէ թէ, մեծ մեծ խօսես,
այլ տառադ պէտք է դործով էլ կատարես:

Մկները յուսահատուած խորհուրդ
արին թէ, կատուն մեզ համար պատիժ
է, փրթեց կոտորեց բոլորիս, բերենք դո-
նէ վղիցը դանկ կախ անենք, որ երբ որ
ուզի թէ մօտենալ մեզանից, ձայնը լսե-
լով փախչենք շուտով: Այսպէս ասե-
ցին, ու բոլորեքեան հաւանեցին, միայն
մնաց որ մէկ մուկ լինէր, որ քաջարտուած
գնար զանգը կատուի պիկից կախ անէր:
Բայց այս մասին ումին որ հրաւիրեցին,
ամէն մէկը մէկ մահանով հրաժարուեց,

մէկը ասեց ոոս է ցաւում, միւսը թէ տան
հարկաւորական բան ունիմ, մէկ այլը թէ
ես փոքր եմ ու կարճ հասակով:

Այսպէս թունդ թունդ խօսում վիճ-
վիճում էին, յանկարծ կատուն դուրս երև-
աց ու վրայ թրջելով ճարթուփշուր արու-
սրա ու նրա, և մնացողն էլ փախած ծա-
ղամուտ էլին:

Երկու այծ.

Թէ ուզում ես, բազաթաւար լինում,
առաջ դու պէտք է օրէնակը ցոյց տաս:

Նեղլիկ անցք՝ դետը տակովը վո-
րար գնալիս, երկու այծ եկին անցքի մէջ
տեղում իրար գէմնուդէմ ելին:

— Ես ու կաց, անց կենում—մէկը կանչեց,
— Դու հեռու կաց—միւսը պատասխանեց.
— Ենպէս կը խփեմ որ —
— Դէ խըփիր տեսնեմ—:

Այսպէս ասեցին, և երկուսն էլ ճա-
կատ ճակատ դէմադէմ կանդենեցին մէկ ան-
գամ զոյի խփեցին, միւս անգամ էլ հինց
ուզում էին խփել, յանկարծ սաղահհելով

երկուն էլ ջուրն ընկին:
 Հովիւը բարեյիշատակ վերայ հասաւ
 վաղիվազ ու խեղդամահից աղատեց նորանց:

Օձ և մանուկ.

Մանկական սխալմունքները պէտքն
 է ներած մեծահոգութեամբ:

Մին անմեղ մանուկ
 Ջուրի վերան
 Բըռնեց օձաձուկ,
 Բայց անգունան
 Դուրս եկաւ սա օձ չար:

Մանուկը կանչեց

— աման աման —

Ուսնկը սըփրըթնեց

Մանածի նըման,

— հայ օձ է օձ է չար:

Բայց օձը խաղաղ

Դէպ երեխայն

Տուաւ քըմճիծաղ,

Եսեց նորան,

— Միր վախիկ ես չեմ չար:

Բայց էլ հետ այսու,

Եսմէ՛ղ մանուկ,

Ի՛նչ դու լինես դու

Ձի բըռնես ձուկ,

Մի դուցէ օձ է չար:

Վարնորդութիւն,

Եթէ ձեռքդ գործում պահես,

հաց ու հաղուստ հեշտ կըգրանես:

Խիկարը մշակ մարդ էր, պարտապէս
 կենում, անդադար ձեռքը վարնոր-
 դութեան մէջ էր: Որդին Աշտոր, թըռ-
 թըռիկ աշխոյժ երեխայ, միտնգամ վաղիվազ
 եկաւ հօրը մօտ անդը, դեռ առաջին անգ
 տեսնելն էր—դա ի՞նչ էս անում, ասեց,
 հայր—քեզ համար հաց ու հաղուստ եմ
 ցանում պատասխանեց ո՛րդի —: Աշտոր
 սա մտքումը պահած միշտ գալիս էր ան-
 դի ցանքսերին մտիկ տալիս՝ հետաքրքիր
 աչքով, որ տեսնէր ի՞նչպէս է բնում
 հացն ու հաղուստը: Տափերը կանաչեց,
 ցորենի բոյսը բարձրացաւ, Աշտոր ասեց,
 հայր,—սա բսածը խոտէ, ուր է պ՛ա հա-
 ցըն ու հաղուստը — վերջն է գովելի,

պատասխանեց, որի, համբերիր, դա էլ
կը տեսնես — Օղիները երեւաց, տերեւ-
ները կողքիցը կախ կախ, և հասկերի գլու-
խը դուրս ցցուած, Աշոտն էլի ստիպեց,
— հայր, կատար ունի սա, թւեր ունի,
ոտներ ունի շոշակ շոշակ — Զէ պատաս-
խանեց, որի, համբերիր յետոյ կիմանաս —
բայց երբ որ հունձը հնձուեց, կալը կա-
սեցին, ցորենի մէկ մասը ծախելով հաղուս-
տի մոտայրին, միւս մասն էլ հաց արին իրանց
համար, էն ժամանակ միայն հասկացու-
Աշոտը որ վաղ ու վատակից էր դնում
իրենց հացն ու հաղուստը:

Գառնան սուգ,

(Երգ.)

Չալմը լոտիկ, տուպտուպորիկ,
Սիրուն, սաքուլ մին ամիկ
Աշունքօր էր որ մօր ծըծից
Իռեք տուած մեր տուն բերին,
Ինքը անմեղ տեսքը անոյշ
Գուլթըս շարժուեց տեսնելուց,
Ո՛հ սիրուն անմեղ դառնիկ,

Ո՛հ անտէր անմէր ամիկ,
Սկըսեցինք սիրսիրատել,
Աղով, հացով մեծարել,
Եւ առաջին խոտ փրօել,
Բայց նա ոչինչ չէր ուտում,
Միայն իրա փափուկ տընչով
Հոտոտում էր հեռանում,
Տաք օթաղի մէջ տարինք,
Մոլոր շոլոր ման էր գամ
Վ ընկվընկում էր վայլալում,
Հէնց էր ասում — սա չէ իմ տեղ,
Ո՛ր է փարահն. ուր է իմ մեր,
Մոլորուած եմ ես անմեղ:
Ո՛հ սիրուն անմեղ դառնիկ,
Ո՛հ անտէր անմէր ամիկ,
Վ աղվազում էր տունից տուն,
Կասես մարդ էր պըտըտում,
Կամ թէ մայրն էր իւր խնդրում,
Քըլմտտաց անմեղաբար,
Մըտքի տունն էր խեղճն ընկնում,
Թըմիթըմիոցից զարհուրում,
Սորանից ի՞նչ պէտք է լինի,
Գոնէ մորթենք, ստեցինք,
Գառնան փլով մենք կուտենք,
Պըկին դանակ քաշեցինք,
Խեղճը խոր խոր խանչխանչեց,

Ու արիւն վաղեց ծըտի չափ:

Ո՛հ սիրուն անմեղ դառնիկ,

Ոհ անտէր անմէր ամլիկ:

Միս էլ չունէր ամլիկիս,

Չոր մօրթին էմ ղիւրով ածած,

Եղինքները իրար կըպած,

Եւ ոսկորներն իւր բոլորպատ

Գեռ ժեժ կաթն էր ճըմճըմում:

Ենէճքաչոր դառնան մարդիք,

Ենմեղ դառին անժամանակ

Մօրը կողքից երլեցին ու

Մատաղ տուին դանակին.

Եփոստ ամլիկ, հազար ափսոս,

Օրը դու կեանքից զըրկուեցիր:

Ո՛հ սիրուն անմեղ դառնիկ,

Ոհ անտէր անմէր ամլիկ:

Գիւղական և կային,

Դու մեղաւոր դուրով ուրելին
մեր մեղադրել:

Գիւղականը փայտ էր կըտրում տունշինել,
Բայց կայինը խրվում էր ու սըլաւքում,
ու յետույիտ փըրփըրում ու գայրանում:

— Դու ժանտ կային, նա ասում էր
բանի պէտք չես,

Եսուհեանվա՛յրընկիր դու ժանդ ուտիքիդ,
Ես իմ խելքով իմ ձեռքերի աշխատանքով,
Հենց մին դարտակ դանակով... Էն կանեմ որ,
Ուրիշն անել նա չի կարող կայինով:

— Դուք իմ տէրս էք և հրամայող,

Պատասխանեց կայինն այսպէս,

Ի՛նչ տեսակ որ դո՛ւ հրամայես,

Արեւարեմ էնպէս էլ ես.

Բայց ինձ որ այժմ, բինջ և փուչ էք
համարում,

Չեր կամքն է բայց, կը փոշմանէք դուք
վերջումն:

Բռնի պատիւ,

Շատ անգամ երեսնամեջամ: պատիւ
ենք տալիս անարժան մարդկանց:

Պառաւ կընկան երեկոյն

Շատ լացկան էր ղինջղինջան,

Եսոս անել չէր լինում

Միշտ գառաժմունք կըուկըռում:

Պառաւը կուզ նեղանում,

Թոյնթորում էր զըմգոհում,

Բայց էլի միշտ շալակին

Խազմացըրած էր պահում:

— Ապառաւ, սրա, հաիցըրին,

Խէ՞ դա հէնց միշտ շալակիդ...

Իսկի տափին չես դընում,

Երեւի շատ սիրում ես:

— Անքառվա՛րար, պառաւն տանց,

Գառաժմունքից ես զըզուած

Ենճարու միշտ շալակում եմ,

Երեսը որ չի տեսնում:

Երկու զազան,

Քեզ հաւասար ընկերի հետ ոտը ձգել:

Երկու զազան մէկը հողի միւսը սը-
ղընձի լող էին տալիս ջրի երեսին, ջուրը
լափու խփելուց ինչքան պղինձը մօտ էր
գնում դէպի հողը, էնքան էլ նա քաշվում
խոյս էր տալիս:

— Ի՛նչու, բա՛րեկամ, հարցրուց սը-
ղինձը, խոյս ես տալիս ինձանից, մի՞թէ
ես էն աստիճանի զոռելին կամ կասկածե-
լին եմ:

— Զէ, պատասխանեց հողը, քու
հարուածիցդ եմ վախենում, որ մի՛ դուցէ
խփեցիր ու ճարթուփշուր արիւր ինձ:

Իսպէս էլ ամէն մարդ քան ղինքը հը-
ղորի հետ կառաւարուելիս պիտի քաղաքա-
վարի կենայ ու աչքի տակովը պահի նը-
րան:

Գայլը և ձին.

Քու արուեստիդ հաստատ մնա՛:

Սէկ ծերացած գայլի մէկ օր որսը
պակասեց, հեռուից մտիկ արու տեսաւ
մին ձի արածելիս և ուտել ուզեց նորան.
Քաշքաշուելով մօտեցաւ ձիան ու հարց-
րուց. — Ի՞նչպէս է քու առողջութիւնը սի-
րելի:

— Ոտըս մեխ է մտել, պատասխանեց:

— Ենհող մնա, գայլը ասեց, ցոյց տուր
ինձ ես դուրս ունեմ:

Իս խօսքիս վերայ ձին շուռ տուաւ ետքը
դէպի գայլը, նա էլ ուղղում էր հէնց մը-
տիկ տալ. յանկարծ թեթեաշարժ ձին

ջուխտակ աքացին խփեց բերանին ու փախաւ խնդկած: Գայլը սառած մնաց իւր տեղը և ինքնինք՝ արտում էր,— Ախ, շատ տեղն էր ինձ, ես մսակեր գոլով ի՞նչ բան ունէի պայտառութեան հետ:

Ղիճի և մըջիւն,

Հո՛վ որ չի աշխատի,
պէտքն է չի էլ ուտի:

Ղիճին թըռթռիկ ամառնօրերն
Խաղ կանչելով անցրուց օրերն.
Գլուխն էլ էնքան խառնուած էր որ,
Չմեռնամուտը չե էլ գիտաց:
Սարսըռալի քամիք խաղաց,
Ի՛նչ չըկար էն պայծառ օրերն
Որ կուտը միշտ պատրաստ գըտնէր:
Ղիճին հիմա ձայնը կըտրած,
Սոված, ծարաւ ու սըքըթած
Ժիր մըրջիւնին մօտը գընաց:

— Ետուած սիրես, ասեց, մըրջիւն,
Ինձ կուտ տուր դու մինչի գարուն,
Թէ ինձ պահես, հենց գիտա թէ,
Մահից հոգի ես ազատում:

— Ի՞նչպէս թէ կուտ, ա՛յ դու յիմար,
պատասխանեց:

Ի՞նչ ես արել բոլոր ամառն,

Չես աշխատել պա՛ քեզ համար:

— Ի՞նչպէս էի ես աշխատում, ճիճին ասեց,

Որ միշտ փափուկ տերեւներում

Պատաստորուած երգ ի երգում:

Պատասխանեց,— որ ամառը չես աշխատել,

Ահոգ, յիմար երգ ես երգել,

Հիմիկըս էլ կորիւր ու գնա,

Անկեր մընա՛ ու դողդողա՛:

Մանուկ և շլոր,

Կատարեալ մարդը իւր վատ սովորութեան վնասակարութիւնը հասկանալով՝ պիտի ուզէ իրան:

Թըլթու շլոր, թորթափ մանուկ,
Համ ուտում էր, համ պարանովում,
Դէպ իւր մայրը թոյնթորում:

— Ի՞նչ շլորը, հարա՛յ մայր իմ,

Տաշտաշորում է բերանն իմ:

Ետ որ ասեց, ժանգժընդաց,
Շլորն էնտեղ լեզու առած

Պատասխանեց մանուկին:

— Ենչորհ մանուկ,

Դ՞ն է իմ վարձքը,

Որ համ ինձ ուտես

Համ ինձ մուր քրտես,

Տեսնում ես որ քեզ

Թըթուցնում եմ,

Անիքդ եմ առնում,

Անիքիդ վընաս եմ,

Եւ դու ինձ ոչ կեր,

Ոչ էլ իմ վերայ

Թուք անարդանք բեր:

Եւ բռնակիր,

Բռնիդ մտիկ աբա, յետոյ ջուրը մտիւ:

Աղաքեւոր էլի մէջքին գետովը անց-
նելիս թըրչուեց, քանի՜ գնաց թեթևա-
ցաւ, ու իրա մտքի մէջ տպաւորուեց
թէ, երևի թըրչուելը բռնան թեթևութիւն
է:

Բայց միւս անգամ էլ բուրդ բռ-
նած ժամանակին երբ որ սիրտ տրաւ գե-
տի աւելի խորովը անցնել, ջուրը ներս

ծծեց ու բեռը թեթևանալու տեղ քանի
գնաց ծանրացաւ, և մինչև տեղ հասնելը
մէջքակոտոր արաւ յիմար էշին: Եւ կար-
ծում էր թէ ամենայն թըրչուելիս կարող
էր թեթևանալ, բայց չէր ըմբռնել աղի
և բուրդի համեմատութիւնը:

Առանց քնինքի անխտիր ամէն բա-
նում մէջ ընկնողը միւս անգամ էլ այս
առաւաւոր էշին պէս բանը բուրդ կը-
դատնայ:

Թըրչող աստղեր,

[Երգ.]

Հայրիկ, հայրիկ, դու ասում ես,
Որ երկընքի աստղերին
Ապուլած է մեր կեանքերնին.
Դու որ տիփնանց ճանաչում ես—
Այժմ էն ո՞ւմ աստղ էր որ թըռաւ,
Թըրթըռաց ու տափն ընկաւ:

Որդեակ մի մարդ հոգին տուաւ,

Իւր աստղըն էլ իւր հետն ընկաւ.

Բարեկամներն մօտին ուրախ

Խըմում, խօսում կանչում էր կպղ,

Կեանքն ու կացքը ապրումսը լաւ,
Բայց մահն յանկարծ վերայ հասաւ:

Հենիք մի աստղ էլի թըռաւ,
Թըռթըռաց ու տափն ընկաւ -

Շատ վառվառուն աստղ էր փայլուն,
(Օրիորդի մահ գուշակեց,
Որ աշխարհից երես թեքած
Խւր սիրողին գիրքը գընաց:
Ինքը սիրուն, բաղն աջողակ,
Բայց հոյ մըտաւ անժամանակ:
Ճաղկից թագ կայ կապած հարսին
Եւ հարսանեաց սեղան սարքին:

Հենիք մին աստղ էլի թըռաւ,
Թըռթըռաց ու տափն ընկաւ:

Եւ սըրավար աստղը թըրչկան
Մի երեկայ էր մեծատան,
(Օրօրոցը իւր զարդարուն
Թողնեց սարքած ինքը գընաց,
Մի վատ ծըծմէր լիբը անըղգամ
Եղու շըմաթ ծըծից մըրդում,
Խեղճ երեխի պուկն է թափում:

Հենիք մի աստղ էլի թըռաւ,
Թըռթըռաց ու տափն ընկաւ:
Ո՛հ ի՞նչ տըհած տեսք ունէր նա,
Պորա տէրը կարծում էր թէ,

Ինքը երկրի մեծ իշխան է,
Եւ մարդիքն էլ ինչպէս չընչին
Բըսած խոտ են իւր առաջին:
Ին՞չ մարդ որ դրա էր հըպատակ
Չընջեց այժմ դրա յիշատակ:

Հենիք մի աստղ էլի թըռաւ,
Թըռթըռաց ու տափն ընկաւ:

Պա շատ բարի մահ գուշակեց,
Հարուստ մարդ էր բարեհոգի,
Ու կարեկից աղքատների,
Ոչ թէ խեղճին հացը կոտոր
Եւ լ բաշխում էր ամբարն բոլոր:
Սաղը հիմի անօղնական
Շատ աղքատներ պիտի մընան:

Հենիք մի աստղ էլի թըռաւ,
Թըռթըռաց ու տափն ընկաւ:

Պա մի հըզօր թագաւոր էր...
Եհա իմաց որդիակ բարի,
Եւ քեզ պարկեշտ խտակ պահել,
Որ քո աստղն էլ մընայ կարգին,
Ոչ թըռթըռայ, ոչ թոյլթափի.
Բայց թէ անշահ գու կեանք վարես,
Քո աստղն էլ կընմանի քեզ,
Եւ կասես դուր սա լոյս տուաւ,
Ճըլլակաթեց ու ծորն ընկաւ:

Երգիչներ.

Խոտակ բարբուռ վարքը մարդին
չէ կարող նորա տղետութիւնը ծածկել:

Մին մարդ դրացուն հացի կանչեց,
Բայց մտքումը ջոկ բան էր դրել,
Ինքը շատ սէր ունէր երգի,
Նրան էլ խաբել բերել էր որ
Երգիչներին ականջ դնի:

Երգիչները սրկիզբն արին,
Բայց արուեստին անհմուտ էին,
Սոսիտ անտաշ դուռում էին
Ինքան սաստիկ էնքան վատ որ
Հիւրի ականջը վրշվրշաց,

Եւ գլխումը նա ցաւ ըզգաց:
— Ի՞մ պատուելի, ասեց հիւրը,
Սորանից ի՞նչ ես հասկանում,
Որ հէնց յիմար ճըզզոց են տամ:

Պատասխանեց—

— Ճճմարիտ է հիւր պատուական,
Առաջ տրանց ձայնն անդուրեկան,
Բայց իրանք լաւ աղնիւ տղայք են,
Խըմիչքից էլ շատ պատրաստ են:

Բայց լաւն էն էր խըմէին,
Եւ արուեստով հմուտ լինէին:

Հնարապետ աղուէս,

Քեզանից դժբաղդընք թէ կարողանաս փակ-
չելով ազատուել մեծ վաղակառութիւն է:

Եսեցին,— Աղուէս,
Դու ի՞նչ վարպետն ես,
Քանի հնարքներ,
Ու դադանիք գիտե՞ս,
Որ մօրթիդ էգպէս
Շուննրից աղատ
Ենփորձ պահում ես:
Բայց ամեն օր մենք
Թագլակորվում ենք,
Մեր մաղն ու մօրթի
Միշտ քերքերվում է
Շունն բերանի:

Պատասխանեց նա:

— Ի՞մ հաղար ու մէկ
Գաղտ հընարքներից
Միմեայն ես ձեզ մէկ

Հարքս ասեմ հմիկ,
Տարիներ անցաւ
Ես միշտ ուտելիս
Գիւղականի հաւ,
Բայց խակի ես բնաւ.
Ոչ շուն եմ տեսել,
Եւ ոչ էլ շան եմ
Շուաք ցոյց տուել:

Անհոգ ուսումնասէր.

Պատերազմի ժամանակ՝ սուրութուր է պէտք,
դոբի ժամանակ՝ ժրութիւն է պէտք:

Պատերազմ էր մի քաղաքի վերայ.
Թնդանօթների ու հրացանների ձայնը խլա-
ցնում էր բոլորին ու կըրակ էր մաղվում
ամեն կողմից, բայց մի դիտուն իւր գրքե-
րի և հետադատութիւնների մէջ ընկրմու-
ած, ոչինչ չէր դալիս աչքովը, և այնքան
խառն էր դուլսը որ՝ թշնամին առաւ ի-
րանց քաղաքը ինքը դեռ չիմոցած: Իս
միջոցին մի կատաղի զօրական թշնամեաց
գունդից յարձակուած ներս մտաւ նորա

սենեակը, և զիտունը նոր սթափած
կարծեց թէ սա իրա ծառաներիցն է և
հրամայաբար դադանուեց վերան ասելով
— կացի՛ր, մի՛ր ներս մտնիր—:

Բայց զօրականը անխաբան մտաւ
սենեակը, խփեց ու սպանեց զիտնականին
ու բոլոր տուն ու տեղը կողոպտեց:

Ջաքոն հիւանդ,

Ոչ թէ դեբբ պիտի սերես, այլ դեբբ
բովանդակութեանը պիտի հետեւես:

Ջաքոն փորքը ինչ թեթեամիտ
մտրդ էր, պատահեց հիւանդացաւ ո՛ւր
դընամ, ո՛ւր չը գնամ, բոլորեքեան բժիշ-
կին մօտ խորհուրդ տուին: Ոսնաքարչ ու
ակամայ դիմեց բժշկին, և ինչպէս հարկն
էր բժիշկը նայեց երակին ու լեզուին և
գեղազիր գրեց, պատուիրելով որ վաղն
առաւօտ խմէր նա ու առողջանար: Ջա-
քոն բերաւ թուղթը մտիկ արաւ տակին
զլիւն. ոչինչ քնար չըհանեց, և կար-
ծելով թէ դարմանը հենց էն գրած թուղ-

Թըն է, քցեց ջրի մէջ տրորեց ու կուլ
տուաւ: Ենցաւ քանի որ Օւաքոն էլի չա-
ռողջացաւ, և շարունակ տրտընջում էր
բժշկին վերայ — Թէ շատ անարուեստ և
անուսում էր:

Շուն և եղն,

Մեկսմեկու չտխտի արկամաբէկնք, ամեն մարդ
էլ հարկաւորութիւն ունի իւր պատշաճ տեղում:

Շունն ու եղը գիւղականին

Իրարու հետ վիճում էին,

Գողուկ շունը փըրփըրեց Թէ,

— Ի՞նչացու ես....

Եփտոս էն տափ որ կոխում ես,

Հըպարտ հըպարտ խօսում ես:

Մե՞ծ բան է քո վարուվաստակ կալկասելը:

Դու ի՞նչ տեղ ես մի քաջութիւն կատարել,

Որ ուզում ես այժմ հաւասար ինձ լինել:

Բայց էն որ ես գիշեր ցերեկ քուն չունեմ:

Եւ աւօտուց ոչխարներն եմ մարդ տանում,

Եւ գիշերը տան պահապան եմ կանգնում —:

Պատասխանեց համեստ եղը,
Ճշմարիտ է դու շատ արի վազկան ես.
Բայց երեսպաշտ և էնքան դու լկտի ես,
Որ չես անում, Թէ որ եղը չաշխատի,
Եւ մեզ համար ապուռ հատիկ շատացնի,
Մեր էլ երբէք ոչ ուտելու պահելու
Եւ մենեկն կեր ու կուտ չէր մնալու:

Նապաստակներ,

Եթէ քո վիճակեցդ անդունտի ես, քեզանից
վատթարին մօտիկ արա, ու դո՛ւնցիք Նապաստակներ:

Նապաստակներն ահով դողով հաւաքուած

Եւ մեն մէկն իւր անցքը պատմեց սարսափած,

Եւ յուսահատ իրանց դառն վիճակից

Ձէին զըտնում ոչ ոք իրանց կարեկից:

Ետում էին — մահը տանի մեզ պըրծնենք:

Ի՞նչ կեանք է որ քաշում ենք,

Ո՛վ վեր կենայ մեր զըլխին,

Վայ մեր կեանքին, մեր օրին,

Եւ մենքեան մեզ հետ դահիճ, մեզ հետընկած

Տիփ մեր արեան ծարաւած,

Եթէ փոքր ինչ ուզես ազատ շունչ քաշել,

Թըշնամիք են զուրս երևում բիւրաւոր,
Քանց մեզ թըշուառ, անդէն վախկոտ ա-
րարած

Դեռ ըստեղծել չէ Եստուած:

Լաւն էն է որ, անխօս, անձայն
Ջուր ընկնենք մենք կոտորուենք,
Քան թէ էսպէս տանջանքաշատ կեանք
քաշենք—:

Եսեցին ու երեսպարան դէպ լճակն
Թաւմիթըմփալի գընում էին խեղտոտուել
Բայց լըճափին վատ ու վախկոտ գորտերը
Ոտնաձայնից սարսելով
Որ ներս դառին ջուր յանկարծ,
Ինտեղ նորանց սիւտը մի քիչ զօրացած
Հանգըստուեցին ու փառք տուին առ
Եստուած....

Որ իրանցից էլ թըշուառներ, վախկոտներ,
Շատերը կան երկրիս վերայ տարածուած:

Խրատ առ որդին.

Լսէ՛ր որդի, նորանց խրատը, բայց
նորանց գործքին մի՛ր հետեւի՛:

Մի բարեպաշտ հօր խելօք որդի պա-

տահեց գիտնական քարոզիչների, լսեց նո-
րանց քարոզները, բայց նկատեց տեսաւ որ
նորանց ասացուածքները իրանց գործքե-
րին համեմատ չէին—: Յետ գալով հօրը
մօտ պատմեց— հայր, երեւելի գիտնական
մարդիկ տեսի, տեղեակ քարոզներ էին
տալիս, բայց իրանց քարոզածները իրանց
գործքերին համեմատ չէին:

Պատասխանեց հայրը— Ընդ որդի,
նորանց խրատը, բայց նրանց գործքերին
մի՛ր հետեւիլ—:

Աւրեմն մարդ պէտք է ունենայ սե-
փական խելք որ կարողանայ իւր օգուտն
ու զնաւը հասկանալ: Մէկի խօսքին պիտի
ականջ դնել, միւսի գործքին հետեւել և
իրա համար ուղիղ ճանապարհ ընտրել
աշխարհիս երեսին:

Փռուսն,

Լաւ է ազատութիւն, քանց անազաւ
բարձր աստիճան:

Մինչև երկինք բարձրացած
Փռուփռում էր փռուանը,
Բայց մէջքիցը թոյլ կապած.
Իսկ երբ տեսաւ թերթերմարուն հանդումը

Գողողաբար դէպի նորան վըշվըշաց։
 — Տեսնում ե՞ս իմ այսքան բարձրը թը-
 ռիւքը...
 Ենունով դու թեւաւոր ես,
 Բայց իմ աչքիս փոշոյ պէս ես,
 Դու հիմա իմ թըրչիլովը նախանձիւում
 չես—
 — Բնաւ... երբեք— թերթերմաղին պա-
 տասխանեց։
 — Օ, ուր ես էսպէս քեզ մեծ բանի տեղ դընում
 թըրչես էլ կուզ, բայց կապ ունես քովիջքում,
 Լըպէս կեանքը սիրելի,
 Երջանկութեան տեղ չունի,
 Բայց ես իրաւ կոչիչստ էլ չի բարձրանաւ,
 Միայն ազատ թըրչում եմ
 Զենց ինչ տեղ որ ուզում եմ,
 Եւ քեզ պէս խօսադարիկ չեմ։

Եթէ որ թեւ ինձ լինէր.

[ԵԲԷ.]

Սայելչութիւնք պշկաբնի
 Ինձ համար են սուտ քովի
 Ես էն թըրչոց թեւերին

Փափագ ունիմ սրտագին.
 Ի՞նչ տեղ ասես թըրչում են,
 Ըրիւնին նրանց եռ է գամ,
 Պարզ օդ հենց որ դուրս են գամ.
 Կըթրչէի սարեր ձորեր,
 Եթէ որ թեւ ինձ լինէր.

Ի ուղբունքերին կենակից

Դաս կառնէի ձայներից,
 Եւ գառնարած աղջկորց
 Կըգառնայի երգակից.
 Եմենայն մարդ սրբբակեաց
 Գոյքը կուտար աղքատաց.
 Եւ իմ երգով կըղբաղուէր.
 Կըթրչէի սարեր ձորեր,
 Եթէ որ թեւ ինձ լինէր.

Ես անտառներ կըթրչէի.

Գողտրիկ քաղցրիկ կերգէի,
 Մարդիքն էնտեղ էշն ընկած,
 Որ երմէին իմ կենաց.
 Օ, ինաւորներին տունից զուրկ
 Ըաղ կուտայի երգի փունջ.
 Մոռացընել ցաւ մըրմունջ.
 Կը թրչէի սարեր ձորեր,
 Եթէ որ թեւ ինձ լինէր.

Բանդին վերայ թառ էլած,

Ինչ տեղ մարդ կայ շատ բըռնուած,
Ես թեկերըս սըբըլմած
Երգ կերգէի մըրմընջալի:
Մէկի սիրտը քիչ կը բացուէր,
Միւսի գիւղն իւր միտը կընկնէր
Իւր հայրինի քաղցր օթեանն:

Իշխաններին կոտըրուած
Կըգնայի սիրտն առնելու,
Ու երայ նըստած ծիթենու:
Կերգէի շատ նրանց խաթրու:
Կըթըրէի յետոյ շուտ շուտ
Ընդանեաց մօտ աքսորուած
Տանել ձեռքիս ճիւղ բըռնած:
Կըթըրէի սարեր ձորեր
Եթէ որ թեկին լինէր:

Իայց չարերից սըրտամնայ
Կը գնայի ես փախըստեայ:
Եւ որ սէրն ինձ անըզգալի
Իւր չանգերում չի բըռնէր,
Եւ շալկըլուած սըրտի համար
Որոգայթներ չի լարէր,
Ես չըպըրտած զինքըս շուտ շուտ
Կըթըրէի սարեր ձորեր,
Եթէ որ թեկին լինէր:

Խիկարը խրատատու,

Դրսի տուրով մի՛ր խաբուել, ներքին
արժանաւորութիւնն է գովելի:

Խիկարը շատ փորձուած ու աշխարհ-
հաստես մարդ էր, մի օր փողոցի մէջ պա-
տահեց մէկին ու տեսաւ նորան աղնիւբըր-
դէ չուխայ հագած, որ զինքը փայփայում
և զարմանալով պարծենում էր իրանով:
Մօտացաւ նորան և մեղմաբար խրատեց
ասելով—

— Ի՞նչ կայ. սիրելի, ի՞նչ պատճառով ես
դու քեզանով զարմացել, մի՞թէ բողբոջ հա-
ղուտըր դու քեզ համար մեծ բան ես հա-
մարում: Մարդ պէտք է խելք, հասկացո-
ղութիւն ու ներքին արժանաւորութիւն
ունենայ, թէ չէ բուրդով պարծինալը տե-
ղիք ունենար, բոլորից առաւել ոչխարները
պիտի կատաղէին, որոնց բուրդը բեռան
պէս կուտուած է իրանց վերայ:

Ուրիմն դու էլ, սիրելի, աշխատիր
աւելի ներքին ընդունակութիւններ ու-

ննալ քան թէ արտաքին դեղեցկութիւն,
որ երկրորդական բաներ են:

Հասարեաւոր ներողամիտ

Տեղ կայ որ քաղցր խօսքը ամեն բռնի միջոց-
ներեց աւելի ներգործութիւն կունենայ:

Հասարեաւոր, ասում են, չտա հաս-
կացող և քաղաքագէտ թաղաւոր էր, նա
սովորութիւն ունէր՝ զիշեր ու ցերեկ ման
զան՝ խորովելու և ուր քին մէջ ծրարեալ
կերպարանքով, ջոկջոկատում ու ճանա-
չում էր մարդկեանց, լրան ու վատը, չա-
րերին ստատիկ պատժիլ ունէր և բարիսե-
րին վարձարում էր առատօրէն:

Մէկ զիշեր անցնում էր նա մէկ
վրանի մօտով, որի մէջ կենում էին իւր
նախկին ծանօթ երկու զինուորները, ա-
կանջ կալաւ ու հասկացաւ որ բամբասում
են խանից, իսկոյն ներս մտաւ վրանովը
կամայ, էնանդ նա ի հարկէ կարող էր
բռնել ու պատժել զինուորներին, բայց մե-
ծանձնութեամբ ներկելով նախատեց նորանց,

ու— Անպէտէք, ասեց, անհա թաղաւո-
րը, որից որ դուք բամբասում էք չարա-
չար—:

Եւ խօսքիս վերայ զինուորները զար-
հուած զղջումով թաղաւորի ոտքն ընկին
և թողութիւն ստանալով՝ այնուհետեւ նիշ
լա ամենահաւատարիմ ծառաները դառնին:

Աշխատանքը արջ

Առաջադէմ լինելով համար կոպիտ ոյժը բաւար-
կան էջիւնէք ու հասկացողութիւն է կարկաճել:

Արջ եղբայրը միտք արաւ

Արջութիւնից հեռանալ

Բանի դործի զինքը տալ:

Տեսաւ որ մին մարդ վարպետ

Մաճ և կեպ ու լուծափեալ

Պոտորում էր անդառում,

Աշխատանքով վաճառում:

Եսեց նա էլ էնպէս կանոն,

Եւ խօսք նրանից պակաս չեմ:

Հատ ծառեր սա հող արաւ,

Գըլիւն էլ շատ վոր արաւ,

Բայց շքնորքին ուինչ բնաւ
Մէջ տեղ բան չի դուրս բերաւ:

Գընաց մարդին, աղաչեց,
— Օգնիր, տսեց, ո՛վ զրացի,
Ես բան չինել չեմ կարում,
Շատեր եմ լաւ կոտորատում,
Բայց շքնորքին ուինչ բան
Եռաջ բերել չեմ կարում:
— Լչդէս շքնորք որ քեզ ունես,
Պատասխանեց մարդն այսպէս,
Հաստ ու կուպիտ թաթուշներ,
Ընկիրթ զըլուխ, տըհաս խելք,
Դըժուար թէ բան առաջ բերես,
Առդ ինչքան էլ հետուես:

Շահարբասի ուղտը

Ինչ տեղ որ Թըմբուկների ձայները չեն ներդործում,
Ինչ զբոլոթիւն տիտի ունենան ճանձների բզզանքը:

Շահարբասը մին սիրեկան ուղտ ունէր.
Օտը զարբարով լաւ դարդարած
Քաղաքումն էլ պինտ պատուիրած,
Որ ոչով իւր ուղտի կամքին չի կրպչէր:

Ուղտը անչափ կատաղեց,
Ընդհներով, պարտիզով
Ներս էր մըսնում անխըռով,
Ինչ ու լինէր, ոտնատակ էր տամ ուտում,
Եւ ոչ ովից երկիւղ չունէր չէր խըթնում:
Քաղաքը տիտի վըրդովեց,

Եմէն հընարք բանացրեց,
Թէ կուզ շատ էլ քամակին
Տափ ութըմուկ թագէին,
Չէր ներգործում բընաւին.
Շարունակ իւր բանին էր:
Պատահեց որ, մէկ օր ուղտը ակորժով
Ներս մըտաւ մէկ պատուաւ կընոջ պարտիզով,
Նա էլ միայն էն պարտեզն էր, որ ունէր,
Յոյսը բոլոր նորա վերան դրած էր:
Պառաւն ուղտին հէնց որ տեսաւ,
Թոյլաթափեց, սիրտը գընաց,
Իչ մէկ ուրիշ ճար չիմացած
Ուղտիցը մօտ դընաց կամաց
Ու ձափ տաւաւ ձայն հանեց որ,
Ուղտը խըրթնէր, ու դուրս փախէր:
Բայց ուղտն էստեղ լեզու առաւ ու ծանրմեծ
Պառաւ կընոջ խոժու դէմքով էսպէս
տսեց—

— Յիմա՛ր պառաւ, չըքաւոր
Իմ քամակին ըխ լաւոր
Թմբուկներ, են կոտորածուկ,
Ես ոչ ընշից չեմ խըրթնել
Հիմա դու քու ծափ տալով
Էդ քու ճանձի բըղզոցով
Ուղղում ես ինձ վախցնել,
Եւ անօթի ու անկեր
Քո պարտիզից փախցնել:

Կաղնի և եղեգն:

Տեսնե՛մ անբարոյանը լուռ պէս բարձրացած:

Բայց ելի շուրջով հողի հետ կոտորածում:

Մի կաղնի ծառ մէկ եղեգնի շշի հետ
Խօսք բաց արաւ, ասեց — Եղեգ, խեղճ
քու կեանք,

Մին ձիան ի՞նչ է, որ նորաներքեւ ճըմնում ես,

Հէնց որ քսովս մին ստեռ ջուրն է օրծրում,

Դու ճոռճըմնում ճըկում ես,

Եւ քեզնոյս էլ ճօճ ես տաւ,

Ար տեսնողի խիղճն է դառն:

Բայց էն որ ես լուռ պէս

Ոչ փոթորիկ, ոչ որդառւմ

Երբէք ինձ չեն ներգործում:

Ինքըս վահան սուր արեւի շողերից,

Եւ միշտ կանգուն ու տնշարժ կամ իմ

տեղից:

Գոնէ իմ մօտ թէ գայիր,

Թուիս ներքեւ կուչ գայիր,

Ես էլի քեզ քամուց էի պահաւան,

Բայց ի՞նչ արած, ընկել ես դու հողմի բերան,

Եւ դըմբաւորսս պիտի հարբած մարդի

նըման:

Պատասխանեց շշ եղեգը, —

Շատ սրբա՛հեղի հողի էք դուք, մի կաղնի,

Բայց ինձ համար խկի երբէք ցույլ մի:

Դուք, հողմերից երկիւղ արէք անելի:

Էնքան տեղիս էլ ես խեղճ չեմ...

Ես թէ կուղ էլ ծըռնւում եմ,

Բայց շատ էլ շուտ կոտորող չեմ:

Դուք ճշմարիտ, շատ էլ լինէք զիմացկան,

Եւ օրից օր պիտոյցել էք բաւական,

Քամուց երես լեքած չունիք բընաւին,

Բայց ըստանէք դեռ ձեր վերջն է գովե-

լին:

Հէնց էս խօսքը դեռ եղեգնի բերանին,

Յանկարծակի սաստիկ քամի սառարաց,
Ու յորդ անձրև կարկրատառնը տեղաց:
Կաղնին բընաւ դեռ իւր տեղից չէ տըմրում,
Բայց եղեղը տապակ տապակ է լինում:
Փըչեց էլի, փըչեց քամին կատաղեց,
Գողգոռալով բուք տուաւ ու վայր քըցեց,
Ինչ կաղնին որ դուին էր կըպել երկընթին,
Եւ ոտքերով հասել էր մինչ անդունդքին:

Փախստական աղուէս,

Անտեղի երկչոտութիւնը շատ անգամ
իզուր քարէքար է քցում մարդիս:

Աղուէսը փախչում էր դուխ վեր
առած — Ի՞նչ կայ, բարիկամ, հարցրին,
որ փախչում ես էզպէս, մի գուցէ որ-
տորդներ ունիս քեզ հետամուտ —:

— Իմ ցաւերիս ո՞ր մէկն ասեմ, պա-
տասխանեց աղուէսը. լսել եմ որ Շահար-
բասը հրամայել է, որ ինչ տեղատիւններ
կան բռնուտէն ու տաննէն, էս պատաճառու
ես էլ փախչում եմ որ ձեռք չընկնեմ —:

— Անշափ զանազանութիւն կայ քու

ու առիւծին մէջ, կըրկնեցին, ի՞նչու պի-
տի ի դուր դու քեզանից խրթնած փախ-
չես էզպէս. մնայ տեղդ. կաց հանդարտ —:

— Չէ, պատասխանեց սիրելիք,
թշնամիքս, գուցէ մասնեցին, ինձ, թէ,
առիւծ է սա, էլ հետ նորա իմ դատը
ո՞րտեղ կը հասնի, լաւն էն է որ, դուխս
էլի ապրացնեմ փախչելով —:

Ալիւր և մաղ

Նեղութիւններէ համբերելով միայն՝ կա-
րող ես կատարեալ կըթուծիւն սղանալ:

Ալիւրը մաղին մէջ հարհարուելով
չարչարվում էր անբառար, տրտնջաց մա-
ղին վերայ թէ — Անխղձմոսնք, ի՞նչ
ես էսքան հարհարում, ու նեղը լծում
ինձ —:

Պատասխանեց մաղը թէ — մինչև չի
հարհարուես չես մաքրուիլ —:

Իսպէս էլ դուք, սիրելիք, միջ տըր-
տընջալ երբոր կըթուծիւն առնելուց շար-
չարանք էք քաշում: Մենք մարդիկս նոր

աշխարհ ընկնելուց մեր վարքութարքի,
խնդի ու բնաւորութեան վերայ շատ
բնատուր թեփեր ու կեղտեր ենք ունե-
նում, նորանք պէտքն է երկար ժամանակ
կրթութեան մէջ հարհարուեն, որ կարո-
ղանան իրանց կեղտոտութիւնից մաքրուել:

Մղուէս և խեցեւորին.

Քո խորամանկութեանը վերայ վստահացած մեր զրկել,
ի՞նչ քեզանց աւել խորագէտն հանդիսեցիր:

Խեցեւորինն ու նենգ աղուէսը
Բնկերվարի ցանքս արին,
Եւ ցորենը հնձած բերին,
Վալին մօտին թուփ արին:
Մղուէսի սիրտը մկորուեց,
— Խեց ի՞նչու ես խեցեւորին —
Պիտի ի՞նչուր տամ բաժին.
Հետք ես մէկ հնարք անեմ,
Եւ բաժնից նրա զուրկ թողնեմ —
Պնացին ման գալ, Մղուէսն ասեց,
— Ե՛կ, խեցեւորին, մենք բաստ բռնենք.

Մինչի ցորնի մօտը վազենք,
Հով շուտ ընկաւ ցորնի վերան,
Տիփ ցորենն էլ լինի նորան —:

Խեցեւորինը համաձայնուեց,
Ձեռք բռնեցին, երգում կերին,
Եւ երբ աղուէսն ուղեց վազել,
Խեցեւորինը նորա ետքին
Թըռաւ թագուն, կըսաւ հագուն:
Վազեց աղուէսն զրժժատակած,
Եւ ցորենի մօտ հասուհաս
Հենց ուղեց որ յետ մտիկ տալ,
Խեցեւորինը խկոյն թըռած
Բնկաւ ցորնի վերայ յանկարծ:
— Ե՛, չար էստեղ ե՞րբ եկիր դու —:
Հարցրուց աղուէսն զարմացած:
Նա պատասխանեց —
— Թէ դու աղուէսն ես,
Ես էլ հագիլ եմ,
Ի՞նչ հօր ինձ քանտես,
Դու շուտ ներս կընկնես,
Ուղեցիր զրկել,
Դու՛ն մնա զուրկ հիմի,
Եւ քեզ ի պատիժ
Ընհաց անօթի
Պնա տան դուռ կրծի —:

Եղբայր.

(Երգ.)

Երկինքը ամրակալած, անձրևում,
Տունս առանց ծածք, և հաց չըկայ մեր տաշտում,
Երեխայքըս թըշուառ՝ ու մերկ-անօթի
Ենկարեկից վընկվընկում են խըղճալի,
Հացի տեղ մենք արտասուներ ենք կուլ տալիս,
Ոչ բարեկամ ունիմ ոչ փող իմ առիս,
Ո՛վ Եղբայրք, աղքատին կեանքն է խաւար,
Կերածն աղու, օրն է սև և ինքն անձար:

Դ՛եր ու նիհար, արտասուակախ, վըշտալի,
Երբ որ ես հրապարակ եմ դուրս գալիս,
Սարգիքն ուրախ զուարթերես խրախալի՝
Գնում ու գալիս ինձ երես չեն շուռ տալիս.
Եւ ես այրուած տըրտընջում եմ առ աստուած,
Որ միշտ էսպէս մնացի դժբախտ անարգուած:
Ո՛վ եղբայրք, աղքատին կեանքն է խաւար,
Կերածն աղու, օրն է սև և ինքն անձար:

Հարուստների պալատները շողջողուն,
Ճոխ հացկերոյթն ու հագուստը զարդարուն,
Կահ կարասիք ոսկեզարդար ու փայլուն.
Սըբիկ տալուց իմ աչքերն են շըլանում,
Սեր տան ոչ հաց ոչ հագուստ կայ մեր հագին,

Սեր օճաղը կրակ չէ տեսնում ողջ տարին:
Ո՛վ Եղբայրք, աղքատին կեանքն է խաւար,
Կերածն աղու, օրն է սև և ինքն անձար:

Եւ առ առատ լի է պըտողով մեր փողոց,
Բայց չոր ցամաք է շըրթունքն իմ երեխոց.
Սան եմ տալիս ու շուրջ նայում կարօտով,
Բայց մարդկանց մէջ չեմ տեսնում գուլթ
կամ գորով.

Եւ տուն եմ գամ թափուր ձեռքով ու տըրտում,
Երեխայքս են իմ երեսից կախ լինում:
Ո՛վ Եղբայրք, աղքատին կեանքն է խաւար,
Կերածն աղու, օրն է սև և ինքն անձար:

Ելնա որդւոյս Վընից բըռնած դողահար:
Տուել եմ այն իշխան մարդին տան նոքար,
Ս արձըր ասեց մեծ իշխանը սաստկաձայն —
Գընա. գընա, ժամանակին արի տար:
Լաց միք լինիլ, օրդիք, խեղճ էք, գնամ
տեսնեմ:

Ելաչ պաղատ գուցէ կարամ, բան առնեմ:
Ո՛վ եղբայրք, աղքատին կեանքն է խաւար,
Կերածն աղու, օրն է սև և ինքն անձար:

Ո՛հ, երանի, ձեզ ո՛վ փարթամ, հա-
րուստներ,

Ելնարհի մէջ դուք էք փոքրիկ աստուածների,
Ձեր ձայներով գողգողում են սար ու ձոր,
Դ՛եր ձեռքերով կեանք էք բաշխում ամեն օր:
Սկերես եմ աղքատ մարդին, անձարին,

Որ աննըշան իւր ըստուերն է մեր կեանքին:
Ո՛վ Նղբայրք աղքատին կեանքն է խաւար:
Կերածն աղու, օրն է սև և ինքն անճար:

Իշխան և իմաստուն.

Ամենայն երկրում մարդկային ազգի մեծա-
մասնութիւնը յիմարներէջ է բաղկանում:

Մին իշխան մարդ հարցմունք արաւ
իմաստունին—

—Եսիր, խընդրեմ, ո՛վ իմաստուն, Ես
տուած սիրես,

Դու որ մարդկանց սիրտն ինչպէս գիրք
կարդում ես,

Ինչու երկրիս յիմարները էսպէս շատ են:

Մին դատարան ժողովարան դեռ չը բա-
ցուած,

Իսկոյն մէջը յիմարներով լըքցընվում են.

Հասարակաց անտանելի էս ցաւին պա,

Իսկի դեղ դիւր դարման չըկայ—:

—Չը կարծեմ թէ, իմաստունը պա-
տասխանեց,

Մեր աշխարհի յիմարները,

Քեզ օրինակ ամառուայ լիւրճանճերը,

Ինչքան տունից դուրս քըշեն,

Ոչինչ օգտիլ կարող չես:

Ելլէ երեսպինս պիտի ներս դան էլլէ
կըրկին,

Եւ կեղտոտեն զարդաքներն ու հրապարակ
յելին—:

Եղուէս և էշ:

Յածբազդի մարդէկը՝ երբ որ տեսնէ չգօրը աղա-
բացած, ամեն կողմից կըտանակարեն նորան:

Եղուէսն էշին պատահելուց հաջորդուց,

—Ինչ տեղից ես դալիս էդպէս, եղբայր
էշ—

Պատասխանեց—

Ես առիւծի մօտիցն եմ գամ, ո՛վ
աղուէս,

Մոր լուր ուզես... Բոխձն հիմա ալլէոր,

Ընկած տըրտում իւր կարանում սըղաւոր,

Նըման ինչպէս խոյլ շանկչընկոտ մի կոծիլի

Իլ իւր տեղից հընար չունի, որ շարժուի:

Մին ժամանակ որ մոնչում էր.

Ենդառն ամեն մըրմընջում էր.

Իայց հիմիկըս դնացող եկող չարաչար

Խըշտում է նրան ոտնահարում անբալարի:
 Հինուց ով որ առիւծի հետ մօռ ունէր,
 Հիմի անվախ, ոխ են հանում ամէնքն էր:
 Իմ էլ երբեմն ձայնն ականջիս որ զըպէր:
 Սարսափելով կըփախէի մութ ձորեր,
 Բայց այժմ նա էլ էն չէր...—
 —Դու չես լինիլ համարձակուած...—
 —Իսէ՞ չի լինեմ...
 Ես նորանից վախելո՞ւ եմ,
 Աղքին էնպէս կըպցրել եմ աքացի,
 Որ յաւիտեան մըտքիցն իսկի, չի թըրէլ—

Լճիւծ և մարդ.

Մարդըն ինչքան էլ մարմնով տըկաք՝ բայց իւր խելքի և ճարտար հնարքներէ օգնութեամբ հզօր է քանզի ամեն գազաններ:

Մեծն առիւծը մէկ օր տեսաւ մէկ կապուռ,
 Նայեց դէմքին, չափեց աչքով, ասեց, դո՛ւ,
 —Պէտքըն է որ, մեր առիւծի ազգ լինես,
 Բայց չեմ գիտում, թէ հասակով դու ինչու
 Մընացել ես փոքրիկ տըկար, ապիկար—:
 Աստուռ տըխուր հաւաչեց խոր վըշտալի,
 —Լճի՛ առիւծ, ասեց ես էլ մեծ էի,

Քեզ պէս հըզօր գազան էի ամեհի,
 Բայց ընկել եմ մարդի թարթափ ես հիմիկ,
 Ու մընացել էսպէս տըկար ու փոքրիկ—:
 Օսլրանայով առիւծն էստեղ մարդկանց դէմ,
 Փայտարարին զընաց կողինց նա ընդդէմ,
 —Դու ա՛նօրէն, ասեց ինչու իմ կատուիս
 Հուփ ես տուել թողել էնպէս մի գունդ միս:
 Պատասխանեց մարդը ահով ու դողով,
 —Լճիւծ՝ հըզօր, ասեց կա՛տու ես մեր տան,
 Ոչ պահած եմ ոչ հուփ տուած կամ նորան,
 Առգես զընամ կանչեմ ես մեր իշխանին,
 Նա զայ ու քեզ պատասխան տայ էր մասին:
 Միայն խընդրեմ, որ ողորմես ինձ օգնես,
 Եւ այս կոծիլ իմ խաթրու դու պատառես,
 Եհա ճեղքը սեպիր չանկըդ նորա մէջ,
 Դու քու չանկով պատառ պատառ շո՛ւտ կանես—:
 Լճիւծն էսպէս կեղծ ու պատիր խօսքերով
 Չանկերն հենց որ կոխեց ճեղքը խաբուելով,
 Մարդը խրկեց փայտի սեպին պուրս թըռաւ,
 Եւ առիւծի չանկին սաստիկ հուփ տուաւ:
 Լճիւծը երբ ցաւիցն ահեղ գողում էր,
 Մարդը նորան կացնի խուփով ծեծում էր:
 —Ինչ բանի ես, ա տընաչէն, մըրմընջաց—:
 —Ետ քան ունիմ ես քեզ հետ դեռ, փոքր ինչ կաց
 —Ինձ էլ կատուի պէս ուզում ես, որ ճընշես—

— Զէքու ազնիւ մօրթիդ պիտի տիկ տամ ես:

Որթ և մոշի թուփ,

Ո՛վ չարասիրտներ, ձեր առօրեայ յաջողութեամբ միք պարծենալ, դիւր Աստուծոյ ահեղ դատաստանին սպասեցէք:

Պարտենքը բացուելուց այգեպանը մտաւ այգին և ինչքան էստեղ խաղողի որթեր կային, բոլորին ձղակոտոր արաւ, որթերը արտասուները շրմփացնում, լաց էին լինում, բայց իրանց մօտի մոշի թուփերը չարասիրտութեամբ քրքջում — ծիծաղում էին —

— Պուք ո՛վ որթեր, ասում էին, դուք մարդկային սիրոյ հրապուրիչներ, բերէք մեր փափուկ տերևով ձեր արտասուները սրբոտներք, որ դոնէ մխրթարութիւն դոնէք մեզանով —:

— Պնացէք կորէք, պատասխանեցին որթերը, դուք վայրենի փուշի թուփեր, մեր ցաւերը մեզ հերիք չեն. միւս կողմից էլ դուք պիտի ծակատէք, երանի կըլինեն որ ձեր վատ երեսն անգամ տեսած չլինէինք ամենևին —:

Լսողէս վիճվիճում ու երեսարանք էին տալիս մեկմեկու, յանկարծ այգեպանը մտաւ և

սրով բոլոր մոշի թուփերին բնաջինջ արաւ ու տարաւ այգիիցը դուրս փրթաւեց:

Ագռաւի ճուտ.

Քու բանիդ հետ բան ունեցիր:

Սրաթե արծիւն երկնքիցը վայր եկաւ, Եւ հօտիցը մէկ փոքրիկ գառ վեր կալաւ, Մի ագռաւի ճուտ էլ էստեղ սա տեսաւ, Իւր աչքին էլ հեշտ եկաւ:

Պեռ մեղադրեց արծիւին էլ ասելով —
— Յափշտակել թէ ուղում էր,
Պոնէ ոչխար յափշտակէր,
Պառնի համար թաթախուելը ի՞նչ կաժէր.
Բայց ես թըրչեմ, յափշտակեմ,
Տեսէք ի՞նչ մեծ տախ վեր կառնեմ —:

Ասեց թըռաւ ագռաւը
Հօտին վերայ ման տուաւ,
Եւ նըկատեց մի մեծ ոչխար տխլիկ դէր,
Որ հաղիւ թէ գայլ գազանի ոյժ պատէր:
Սըրտապընտուեց վերայ տուաւ,
Բուրդիցը պինդ նիստայ կացաւ,
Եւ էնպէս պինտ պատատորուեց,

Ճանկերն էնպէս պինդ բեւեռեց,
Խիտ ու զանգուր բուրդերի մէջ,
Որ միւս անգամ էլ դուրս քաշել
Նորա համար անհնար էր:

Հովին էնտեղ վերայ հասաւ,
Եւ բռնեց այն յիմար աղաւ,
Փետուրները քանդեց մէկ մէկ,
Եւ երեսորց համար գողիկ
Շինեց ծաղր ու խաղալիկ:

Ի որ և աղաւ,

Ի որը ծառին թափ նստած տեսաւ որ
Գետեղլի մօտ մի թուխ աղաւ անշնորհ
Մըմնում է ջուր դինքը կոշտ կոշտ հար-
հարում,

Ու դուրս դալիս մաքրւում:

Ի որն էնտեղից զարմացած
Օտոր արաւ ու կարկըջաց—

— Ե՛ս և, ասաց, ի՞նչ բանի ես,
Ի՞նչ ես մաքրում դինքըդ էդպէս,
Անդա կայ վերադ, քոսոտ ես թէ՛,
Ամ թէ ուրիշ ցաւըդ ի՞նչ է—
Ունքակախած պատասխանեց աղաւը—

— Ետուածանից որ չէ ծածուկ,
Վեզանից էլ ի՞նչ ծածկում ես,
Դու էլ գիտես, որ մեր ազգը շատ բողաձայն
Շատ արհամարհ և վատթար է երկրին վերան:
Եւ էսպէս որ մենք անարգ ենք և անուանարկ,
Պատճառը մեր թուխ փետուրներն է այս անուանիք:
Ոչ թըրչունքն են ընկալնում մեզ,
Ոչ մարդիկն են գինհատում մեզ,
Եւ էս մասին ես նեղացած և իղձառուած.
Օ՛րինքս ջրով միշտ հարհարում և մաքրում եմ,
Եւ յուսամ թէ, գոյնրս լինի քո չափ պայծառ,
Սոխակի պէս գողտրիկ ձայնով ես անդադար
Երշալոյսի երգը կերգեմ,
Եւ փառք պատիւ կը ժառանգեմ—

Արրկնեց լորը գոռողաբար —

— Մըխալում ես աղաւ եղբայր...

Թէ երգասաց կուղես լինել,

Դու ջանք արա ձայնդ փոխել,

Թէ չէ գոյնըդ ի՞նչ մեղ ունի:

Ինչքան ձայնդ քո կըլկըլ է,

Վո վարմունքն էլ միշտ անարգ է—

Եղաւ,

Վերական վտանգից ինչքան կարելի է
պէտքն է շուտով խուսափել:

Իրիկնադէմ, ծարաւ սղուէս, ցոբոյ՝ ձըմեռ,

Գնաց գիւղի մօտի գետից ջուր խրմել
 Զ ուրը թէ կուղ մին անցաւոր հալ ընկած,
 Եւ սառուցը մէջ տեղիցը կտորրուած,
 Բայց մինչեւ որ ջուր խրմելը աղուէսին
 Սառաւ ժընաց ջուրի միջին իւր հագին:
 Դեռ էնքան էլ պինդ կըպած չէր,
 Եթէ ուղէր քանի մաղից անց կենալ,
 Քիչ զօր անէր, փոքր ինչ ձրդէր,
 Ար սրբծընէր
 Քան ինչ գեռ ևս ոտան թըմփոց լսու՜մ չէր:
 Բայց նա ի՞նչպէս յօժարուէր այդ վընասին,
 Ելանդակէր թել թել փնջակ իւր հագին:
 Էլ ձար չը կար, մընամ ասեց մինչի լոյս,
 Քիչ տրեւի տաքն ընկնի,
 Սառուցը քիչ հալ ընկնի,
 Հաղիս գուցէ ողջ անվնաս բաց ընկնի:
 Եսեց աղուէսն ու կուչ եկած համբերեց,
 Բայց սառուցը քանի զընաց էլ պընդեց:
 Եւ աւօտ է լուսաբաց,
 Տեսաւ հետիք երևաց
 Ունաճայնի թըմփթըմփոց,
 Զ երմը ընկնեց ու գողաց:
 Ոյժը մին տեղ հաւաքեց,
 Օր տրաւ ու պինդ ձրդեց,
 Հաղին յանկարծ կիրթ կըտրեց,

Եւ վաղիվազ հագիւ հաղ թէ,
 Օխքը միայն աղատեց:

Երկու շուն,

Շնորհալի բնաւորութիւնը անելի մեծարելի է
 հասկացողի մօտ, քանզ անկերթ և կոպիտ ոյժը:

Հաւատարիմ՝ զըռան. շանը թոփլիկին
 Եւ քովն ընկած իւր հին ծանօթ պերճ փոթին,
 Ու յըրտախաղ լոյցադուսեց:
 Կա բազմած էր պատուհանին
 Փոչ փոչ բարձն էլ իրա տակին,
 Փափլիկ, փոքրիկ, դանդուրաւոր,
 Պերճ ու զուարթ և փառաւոր,
 Թոփլիկին հենց որ տեսաւ նորան,
 Երիւնակից, կասեւ իրան,
 Մորմոք եկաւ ու կարանչեց,
 Պատուհանի տակիցը հենց
 Մեղմիկ ձայնով հապէս խօսեց—
 —Բարով, փոթի, ի՞նչ ես անում:
 Ին ի՞նչ տէրը տուն տարաւ քեզ էլ չեմ տեսնում:
 Միտըդ է որ զըռանն էլնք դոյզըն փորով...
 Հիմի հո՛ւնց ես ապրուստով—:

— Ես իմ բաղտից դոհանակ եմ, պատասխանեց,
Իմ տէրը ինձ իւր հոգւոյն պէս սիրում է,
Եւ իմ կացքը հանդիստ, կեանքը ուրախ է:
Խըմիւր ուտիլս միշտ անպակաս, անվըրդով,
Իմ տիրոջ հետ խաղ եմ անում վազվազում,
Սատակելուց բարձի վերայ թէք ընկնում:
— Պա դու ինչպէս —:

— Ես
Թուփիկն հագին լախտ արած և քիթը կախ
Եւ քաշեց թէ, էլ հէնց էս եմ
Տօթի ցուրտի տակ տընքում եմ,
Տան բոլորպատ սլատ սլատ անում:
Եւ տեղին էլ թէ չեմ հաչում,
Սատ անողորմ թակ եմ ուտում:
Բայց դու փոթի զարմանք է որ,
Էդպէս փոքրիկ, էդպէս անդոր
Ի՞նչպէս է որ դու վարն ընկիր,
Եւ սպրեւու լաւ կերպ դրտիր,
Ի՞նչ կերպ դործ ես դու կատարում,
Որ էդպէս ճոխ միշտ կաս փառքում—:
— Ի՞նչպէս թէ դործ, ահա քեզ հարց—,
Փոթին ծաղրեց ու սուտ ժրպտաց—
— Ման եմ դադիս ես ծառս էլած —:

Խամահատ.

Վայ էն տէրութեանը կամ գերտատանին որի որդը իրա մեջ
ընցն է. բայց Թշնամիներից ֆեսակարը ներքին Թշնամին է:

Հողագործին վարի հողը վաստակեց,
Սացինն առած գընաց անտառ՝ որ էնտեղ
Նոր խամահատ բաց անէր և ցանքս անէր:
Խրփեց կացնով, ծառերն ուժգին գողացին,
Եւ մըրմունջը նոցա հասաւ մինչ երկին,
Եհեղ գանգիւն անտառի մէջ տարածուեց,
Ծառերի և թուփերի մէջ ահ քըցեց.
Բոլորեքեան քիթ քիթ դրած սարսափով
Սաշվաշեցին ասելով—
— Ոհ ի՞նչ դժբաղդ կոտորած,
Ընկել է մեր մէջ յանկարծ.
Խքան տարուայ մենք ծըմակ,
Յաւ չենք տեսած էս տեսակ.
Ենթիւ ծառեր ու թուփեր
Ստորովիլ են վայր թափուել.
Մահ ընդհանուր անխընայ
Պիտի հասնի մեզ վերայ—:
Սորանց մէջին մի հին փորձուած կաղնի ծառ—

— Եսեց եղբայրք, սա թշնամու արարք է,
Եւ թըշնամոյն մասնողն էլ մեր միջիցն է,
Թէ չէ ոչ ոք դըրսից մենակ կարող չէր,
Մեր մէջ էսպէս մահ քըցիլ—
Սորա խօսքին վերայ տիպիւնք արթնացած.
Եւք ածեցին և ճըշմարիտ տեսին որ
Սոտորոզը կուզ երկաթի մի կըտոր,
Իայց կոթն իրանց միջիցն էր—

Իմ վիճակը,

[Երգ.]

Ընտուռն անտէր աշխարհ ընկի
Սատնդաւն պէտքն իմ կոյր բախդի,
Ոչ ապաստան պաշտպան ունիմ,
Ոչ ապահով կեանք, կացք, ունիմ,
Եւ երբոր ես տըրտընջալի
Գանգատանքի բերան բացի,
Ինձ ի վերուստ դըրդեց մի ձայն—
Թէ երգերն իմ պիտի միայն
Ի իննն խրախոյս ինձ և պաշտպան:
Փառօք, փայլուն հարուստները,
Ի ամբարտաւան իշխանները
Իմ աչքերըս խիստ ծակոտում
Եւ ինձ ծընշում հուսի են ածում,

Չար չար արարք ամենայն օր
Ղըժժում են իմ չորսուբողոր.
Ինձ ի վերուստ դըրդեց մի ձայն
Թէ երգերն իմ պիտի միայն
Ի իննն խրախոյս ինձ և պաշտպան:
Գառըն հարկից ես ըստիպում
Չափաւոր կեանք ինձ ընտրեցի,
Ծանր ու դժուար աշխատանաց
Պարտաւորումս ժուժկալեցի,
Հիւանդ նիհար և նըքըթումս
Ընկողնի մէջ կըսկըծացի.
Ինձ ի վերուստ դըրդեց մի ձայն—
Թէ երգերն իմ պիտի միայն
Ի իննն խրախոյս ինձ և պաշտպան:
Սըն փամանակ աշխոյշ կեանքը
Սոռացնում էր իմ ցաւերը,
Ըողգութիւնս հիմի անցաւ,
Իմ աշխոյժս էլ իւր հետ տարաւ,
Եւ յոյժս ես զուրկ կարիքներից
Ընկած անոք անկարեկից,
Ինձ ի վերուստ դըրդեց մի ձայն—
Թէ երգերն իմ պիտի միայն
Ի իննն խրախոյս ինձ և պաշտպան:
Ուրեմըն ես միայն գըրջով
Պիտի ապրեմ իմ երգերով,
Եւ ինչ մարդ որ երգ է սիրող,

Նա կըսիրի և երգ գրող.
 Արիք ուրեմն պատանեկեկք,
 Ընկալէք այս ծաղկեփրնջիկ,
 Որ ձեզանով ես սիրտ առած
 Գլըրեմ երգեր, որ ինձ լինեն
 Եւ խրախուսանք և ապաւեն:

Բաղէ և աղանի.

Աբիւնարբու աւազակի մօտ զուր է
 բողբոլում իւր անմեղ զոհը:

Աղաւց է որ ամենայն տեղ աղանի
 Համարվում է սուրբ պատարագ տէրունի,
 Եւ պատճառու աղանիքն էլ աներկիւղ
 Համարձակ միշտ շուռ են գալիս քաղաք գիւղ
 Ոչ ով իրանց կամքին երբէք չի կըպշում,
 Եւ իրանք էլ ահից խրթթնած չեն փախչում:
 Բայց պատահեց, բազէն մէկ օր շատ քաղցած
 Աչք ման ածեց էս կոյս էն կոյս կատաղած,
 Ոչ ծիտ ոչ լոր ոչինչ բընաւ ճանկ չընկաւ,
 Այլ նըկատեց էն միւս կողմին նա տեսաւ
 Տըխլիկ թոփլիկ աղանի,
 Նազաճեմ և խրախալի
 Ման է գալիս մարդերի . . .

Սիրտը թըմփաց, թոյլթափեց:
 Եւ ինչպէս որ որոտընդոտ զախտին կայծակ
 Դու անգիտակ, տրաքուի ու գայ վերայ յանկարծ
 Էսպէս բաղէն որսին վերայ յարձակուած
 Թըռած սրաթև որ գընաց,
 Խեղճ աղանին կայծակնահար
 Ծընկունքն ընկաւ սարսափած:

Դատ, . . . նա կանչեց—յափըշտակիչ աւաղակ,
 Միր կըղջիլ ինձ, ես տերունի պատարագ
 Եւ նոյեան սուրբ տաղանին եմ յիշատակ—
 Բայց բաղէն թէ—ձայնըդ կըտրի,

Պատարագը տերունի
 Տիրջ տանը կուլինի,
 Եւ ոչ թէ էս մարդի վերայ
 Տըրտինկ տըրտինկ կուխաղոյ—
 Ասեց չանկն ու նորա մըսին մէջ շամփրեց,
 Զիւծիւտեց դռնդ դռնդ արաւ կուլ տուեց:

Կապիկի որս.

Պէտքն է ունենալ խելիւր ընթրողական կարողութիւն
 որ կապիկի պէս անխափք ամեն բանի չի նըմանուելը:

Կապիկները որսորդը փռեց տափին վերայ
 ուռկանը և նորա մէջ խաղաց դուրեկման ձևէ:

րով. նա էնպէս վայելուչ կերպով խաղում էր
ուռականի մէջ և էնպէս ուրախ թրչում ու թէք
էր ընկնում նորա միջին՝ որ հեռուից ծառի
վերայ նստոտած կապիկները յափշտակուելով
իրանք էլ ցանկանում էին շատ որսորդին նըմա-
նուել և նորա նման ուռականի մէջ պար բռնել
ու թրչկոտել ուրախութեամբ:

Որսորդը լարեց իւր խաբեական որոգայթի
բոլոր թելերը և ինքը հեռանալով մտաւ ան-
տառի մէջ՝ որ անդեց կարող էր նշմարել իւր
